ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-20/2»

ք. Դիլիջան «25» 06 2020 թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ,,ԳԵՎՏԱՆԻՔ,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Խանզատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածովսահմանվածծավալաթերթ-նախահաշվովնախատեսված,,**Դիլիջան համայնքի թիվ 3 մանկապարտեզի շենքի վերանորոգում**,, աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 25.12.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀօրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնելերաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ...լով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ...ունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը ...ատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետովնախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկականպայմաններինհամապատասխան, կատարելիրկողմիցմոնտաժվածսարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքումհատուցելՊատվիրատուինպատճառվածվնասներըևվճարել 6.3 կետովնախատեսվածտուգանքը:

3.4.7 Շինարարությանօբյեկտիկոնսերվացմանանհրաժեշտությանծագմանդեպքում՝ իրմիջոցներովկատարել աշխատանքըդադարեցնելուևշինարարությունըկոնսերվացնելուանհրաժեշտությունիցբխողողջամիտծախսերը:

3.4.8 Եթեշինարարականծրագրերիկատարմանարդյունքիկամդրաառանձինբաղադրիչիհամարսահմանվածերաշխիքայ ինժամկետիընթացքումհայտնեկելկատարվածաշխատանքիթերություններ, ապաԿապալառունպարտավորէիրհաշվին, Պատվիրատուիկողմիցսահմանվածողջամիտժամկետումվերացնելթերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվումՊատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման ակտագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկո նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **75620892** (յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր քսան հազար ութ հարյուր իննսուներկու) ՀՀդրամ, որից **12603482** (տասներկու միլիոն վեց հարյուր երեք հազար չորս հարյուր ութսուներկու) ՀՀդրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսիչափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համարպատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[30] *Կապալառուն կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 ՊայմանագրիհետկապվածվեճերըենթակաենքննությանՀայաստանիՀանրապետությանդատարաններում:

8.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝ համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

...րապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագրով սահմանված կամ սահմանված սրոկ... լուծելու ... ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի ...րոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: ...մաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերություններին կատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դիլիջանի համայնքապետարան	,,ԳԵՎՏԱՆԻՔ,, ՍՊԸ
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55	Ք. Վանաձոր, Հյուսիսային 14
ՀՎՀՀ 07618909	ՀՎՀՀ 06944677
ՀՀ 90040208013	Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՀ 220053334045000
Համայնքի ղեկավար Ա. Սամերյան	Տնօրեն Ա.Խանզադյան
-----------------------------	-----------------------------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելվածթիվ 1
«25» 06 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ, դրամ		
					Միավորի	Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	6	7
		Քանդման աշխատանքներ					
1	13-5	Գլազուրային սալիկների քանդում պատերում	մ^2	200,00	0,638	0,625	125,048
2	11-94	Ց/ավազային սվաղի քանդում	մ^2	200,00	0,196	0,192	38,416
3	23-173	Մետաղական պատուհանների քանդում	մ^2	232,00	1,985	1,945	451,310
4	23-174	Փայտե դռան շրջանակների քանդում	մ^2	71,70	1,245	1,220	87,481
5	5-42	Փայտ շրիշակների քանդում	մ	721,60	0,013	0,013	9,193
6	11-80	Պատերի հին ներկի մաքրում	մ^2	3296,00	0,309	0,303	998,095
7	1-1593	Շին.աղբի բարձում էքսկավատորով հնքնաթափ ավտոմեքենա	1000մ^3	0,082	609,528	597,337	48,982
8	Գ130 Կ3	Ավելորդ բնահողի տեղափոխում ա/հնքնաթափով մինչև 3կմ	տն	135,30	1,089	1,067	144,395
		Հարդարման աշխատանքներ			0	0,000	0,000
1	11-57	Պատեր սվաղի վերանորոգում գաջով	մ^2	268,00	2,435	2,386	639,528
2	15-246-1	Պատերի բարելավված սվաղում գաջով	մ^2	188,00	2,148	2,105	395,748
3	11-64	Առաստաղի սվաղի վերանորոգում	մ^2	99,00	2,819	2,763	273,499
4	15-247-1	Առաստաղի բարելավված սվաղում	մ^2	44,30	2,567	2,516	111,444
5	15-660	Պատերի և շեպերի ներկում լատեքսով	մ^2	3383,00	0,940	0,921	3116,420
6	15-661	Առաստաղի ներկում լատեքսով	մ^2	1069,00	1,076	1,054	1127,239
7	34-390	Կախովի առաստաղի գիպսասալվառաթոթիզ. 9.5մմ հաստ.	մ^2	14,00	9,880	9,682	135,554
8	15-256	Պատերի սավաղում ց/ավազային շաղախով	մ^2	200,00	1,758	1,723	344,568
9	15-84	Պատերի երեսապատում հախճասալեռով 300x450	մ^2	200,00	7,229	7,084	1416,884
10	14-356	Փայտե պատերի յուղաներկում 2 անգամ	մ^2	38,00	1,285	1,259	47,853
11	14-357	Փայտե առաստաղի յուղաներկում 2 անգամ	մ^2	1069,00	1,533	1,502	1606,001
		Հատակներ			0	0,000	0,000
1	11-55 11-56	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 3սմ հաստ	մ^2	932,40	1,257	1,232	1148,586
2	11-18 3-1	Ջրամեկուսիչ շերտի կառուցում մեկ շերտ հզոգամով	մ^2	69,40	2,496	2,446	169,758
3	11-55 8-1	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 2սմ հաստ	մ^2	69,40	0,904	0,886	61,483
4	11-134 20-3	Չսահող խեցասալե հատակի կառուցում սոսինձի վրա 330x330	մ^2	138,90	7,255	7,110	987,565
5	15-84	Խեցասալից շրիշակների կառուցում սոսինձի վրա h=10սմ	մ^2	1,80	7,900	7,742	13,936

	11-187	Լամինատից հատակի կառուցում 7մմ հաստ. /շոհշակով, սպունգով/ լավոռակ	մ^2	634,50	5,504	5,394	3422,442
7	11-134 20-3	Պրեսգրանիտե հատակների կառուցում սոսինձի վրա 300x300	մ^2	159,00	7,658	7,505	1193,270
8	15-84	Պրեսգրանիտե սալիկներով շրիշակների կառուցում սոսինձի վրա h=10սմ	մ^2	15,60	8,295	8,129	126,814
		Բացվածքներ			0	0,000	0,000
1		Մետաղական խուլ դռան տեղադրում	մ^2	43,26	56,865	55,728	2410,780
2		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի ներքին դռների տեղադրում	մ^2	10,82	37,133	36,390	393,743
3		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի վերնափեղկի տեղադրում /ներքին դռների/	մ^2	3,02	19,055	18,674	56,395
4		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի արտաքին դռների տեղադրում	մ^2	11,36	37,133	36,390	413,394
5		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի վերնափեղկի տեղադրում /արտաքին դռների/	մ^2	4,32	19,055	18,674	80,671
6		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում.	մ^2	66,34	19,055	18,674	1238,827
7		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում.	մ^2	21,10	28,989	28,409	599,435
		Դռներ - պատուհաններ			0	0,000	0,000
1		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում.	մ^2	121,68	19,055	18,674	2272,240
2		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի պատուհանի տեղադրում.	մ^2	9,02	28,989	28,409	256,251
3		Մետաղապլաստե բլոկով սպիտակ 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ պրոֆիլի դռների տեղադրում	մ^2	22,05	37,133	36,390	802,407
		Պատերի ջերմամեկուսացում			0	0,000	0,000
1		Հանքային բամբակի կոշտ սալեր ամրացված պոլիմերցեմենտային հատուկ սոսնձով	մ^2	96,00	4,976	4,876	468,142
2		Արտաքին հանային բամբակի հակահրդեհային գոտի 300մմ	մ^2	135,00	2,417	2,369	319,769
3		Արտաքին պատերի ջերմամեկուսացում XPS փրփրապոլիստիրոլով	մ^2	2110,00	0,967	0,948	1999,563
4		Շենքի բոլոր անկյունների համար գ/թիթեղյա անկյունակ 50x50	մ	97,20	0,284	0,278	27,053
5		Փ3 Вр-I 100x100մմ բջջային ցանցի տեղադրում	մ^2	2110,00	0,719	0,705	1486,748
6	15-298 60-1	Ց/ավազային շաղախով սվաղ 3սմ հաստ.	մ^2	2110,00	2,582	2,530	5339,060
7		Պատուհաանի և դռների բացվածքների պարագծով անկյունների համար գ/թիթեղյա անկյունակ 50x50	մ	270,80	0,284	0,278	75,369
8	15-210	Բացվածքների շեպերի սվաղում ց/ավազային շաղախով մինչ 20սմ լայնությամբ	մ	270,80	0,624	0,612	165,600

		Φ3 Bp-I 100x100մմ բջջային ցանցի տեղադրում	մ²	32,50	0,719	0,705	22,900
10		Հանքային բամբակից ներքնակներին և փրփրապոլիստիրոլից սալերի ամրացում սոսինձ Ceresit CT 190	մ²	2341,00	2,417	2,369	5545,033
11	8-279	Արտաքին պատուհանագոգերի կառուցում 0,5մմ հաստ.ցինկապատ	մ²	17,80	1,006	0,986	17,549
12		Արտաքին պատուհանագոգերի ի կառուցման կառուցման համար ցինկապատ գ/թիթեղ 0,5մմ	մ²	17,80	4,403	4,315	76,806
13		Հանքային բամբակից ներքնակներին և փրփրապոլիստիրոլից սալերի ամրացում խցաբութակի կոմպլեկտ	հատ	1800,00	0,014	0,014	24,696
14	15-528	Ճակատի և շեպերի ներկում ներկում ճակատային ներկով /ծածկույթով/	մ²	2382,00	0,807	0,791	1883,829
		ՆԵՐՔԻՆ ԿՈՅՈՒՂԻ			0	0,000	0,000
1	19-70	Զուգարանակոնքի ապամոնտաժում	կոմպլ.	12,00	0,650	0,637	7,644
2	19-69	Լվացարանի ապամոնտաժում	կոմպլ.	12,00	0,526	0,515	6,186
3	19-70	Լոգնոցի տակդիրի ապամոնտաժում	կոմպլ.	4,00	0,650	0,637	2,548
4	17-62	Զուգարանակոնքի տեղադրում /մանկական/	կոմպլ.	8,00	31,638	31,005	248,042
5	17-62	Զուգարանակոնքի տեղադրում	կոմպլ.	4,00	31,638	31,005	124,021
6	17-28	Լվացարանի տեղադրում	կոմպլ.	12,00	18,904	18,526	222,311
7	17-35	Լոգնոցի տակդիրի տեղադրում	կոմպլ.	4,00	19,519	19,129	76,514
		ՆԵՐՔԻՆ ՋԵՌՈՒՑՈՒՄ			0	0,000	0,000
1	18-109	Միջանցքներում լրացուցիչ ջեռուցման ալյումինե մարտկոցների տեղադրում h=500 (արանց արժեքի)	կքմ	11,20	0,699	0,685	7,672
2		Ալյումինե մարտկոց h=500	սեկց	32,00	5,802	5,686	181,951
3	16-261 q=0,25	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում փորձարկումով Φ20	մ	56,00	1,370	1,343	75,186
4	16-134	Պոլիպրոպիլենե փականի տեղադրում Φ20	հատ	7,00	3,932	3,853	26,974
5		Պոլիպրոպիլենե եռաբաշխիչ Φ20x20x20	հատ	8,00	0,114	0,112	0,894
6		Պոլիպրոպիլենե արտուղում /թերում/ Φ20	հատ	40,00	0,048	0,047	1,882
		Է1. ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ			0	0,000	0,000
	1.Ուժային էլեկտրասարքավորումների մոնտաժում				0	0,000	0,000
1	Բաշխիչ վահան U=380/220 I=V100A կազմված		լր-ամ	4,00		0,000	0,000
1.1	8-524-1	Վահանակ պոլիստիրոլե 18 մոդուլանոց, չափսը 430x330x120մմ	հատ	4,00	49,622	48,630	194,518
1.2	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 220v, 25A բաշխման n=1	հատ	4,00	3,428	3,359	13,438
1.3	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 220v, 10A բաշխման n=1	հատ	4,00	3,189	3,125	12,501
1.4	8-525-1	Միաբևեռ ավտոմատ անջատիչ 220v, 16A բաշխման n=2	հատ	8,00	3,309	3,243	25,943
2	8-525-1	Պաշտպանիչ անջատման սարք քառաբևեռ A տիպի ~380V, 40A/300mA	հատ	4,00	25,974	25,455	101,818
3	8-525-1	Պաշտպանիչ անջատման սարք երկբևեռ A տիպի, էլ. մեխանիկական ~220V, 25A/30mA	հատ	8,00	14,014	13,734	109,870

4	8-591-10	Երկստեղ վարդակ շտեպսելային երկբևեռ, 3-րդ հողանցման կոնտակտով փակ տեղադրման 220V, 16A, IP20	հատ	36,00	1,701	1,667	60,007
5	10-975-8	Տուփ վարդակի և անջատիչի տեղադրման	հատ	72,00	1,225	1,201	86,437
6	8-591-10	Տուփ բաժանարար փակ տեղադրման	հատ	48,00	0,812	0,796	38,214
7	21-43	Ակոսների փորում	մ	520,00	0,357	0,350	182,175
8	15-246-1	Ակոսների բարելավված սվաղում գաջով	մ^2	36,40	2,148	2,105	76,636
9	21-200	Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՊՎԳ 3x2,5մմ^2	մ	200,00	0,570	0,559	111,776
10	21-108	Պղնձե միաջիղ մալուխի անցկացում սվաղի տակ ՎՎԳ 5x6մմ2	մ	100,00	2,534	2,484	248,362
	2.Լուսավորության էլեկտրասարքավորումների մոնտաժում					0,000	0,000
1	21-135	Լուսատու 40W-LED լամպերով, առաստաղի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	25,00	8,706	8,532	213,288
2	21-135	Լուսատու 40W-LED լամպերով, պատի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	16,00	8,706	8,532	136,504
3	21-135	Լուսատու 30W-LED լամպերով, առաստաղի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	16,00	7,995	7,835	125,359
4	21-135	Լուսատու 20W-LED լամպերով, առաստաղի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	29,00	7,284	7,138	207,011
5	21-135	Լուսատու 10W-LED լամպերով, առաստաղի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	20,00	6,573	6,442	128,834
6	21-135	Լուսատու 16W-LED լամպերով,պատի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	3,00	6,858	6,720	20,161
7	21-135	Լուսատու 16W-LED լամպերով,առաստաղի, IP20 /լամպի հետ միասին/	հատ	12,00	6,289	6,163	73,957
8	8-591-2	Անջատիչ միաբևեռ մեկստեղնավոր փակ տեղադրման - 250V, 6A, IP65	հատ	30,00	1,448	1,419	42,582
9	8-591-10	Նույնը երկստեղնավոր, IP20	հատ	6,00	2,056	2,015	12,091
10	21-200	Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՊՎԳ 2x1,5մմ^2	մ	400,00	0,347	0,340	136,060
11	21-200	Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՎ 1x1.5մմ^2	մ	105,00	1,160	1,137	119,398
		ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ				0,000	0,000
		Մետաղական դռնակի և դարպասի կառուցում				0,000	0,000
1	1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով կետային հիմքերի համար	մ^3	0,20	4,358	4,271	0,854
2	1-968	Ավելորդ բնահողի փոռում տեղում	մ^3	0,20	0,978	0,958	0,192
3	6-2 1-2	Կետային հիմքի կառուցում մետաղական սանգնակների տակ B - 7.5 բետոնով	մ^3	0,20	49,764	48,769	9,754
4	9-122	Մետաղական դռնակի և դարպասի կառուցում	տն	0,1732	81,301	79,675	13,800
5		Մետաղական խողովակ 100x100x4	մ	6,00	6,190	6,066	36,396
6		Մետաղական խողովակ 40x40x2	մ	17,70	1,177	1,154	20,418
7		Մետաղական խողովակ 20x20x1,2	մ	42,10	0,448	0,439	18,476
8		Մետաղական թերթ 100x5	տն	0,0008	533,111	522,449	0,418
9		Մետաղական անկյունակ L 40x5	մ	0,15	1,578	1,546	0,232

		Պողպատե ձող Φ10A240	տն	0,002	414,642	406,350	0,813
11		Ծխնի	հատ	6,00	0,569	0,557	3,344
12	15-614	Մետաղական էլեմենտների լուսաներկում 2 անգամ	$մ^2$	18,00	1,237	1,212	21,814
		Բարեկարգման աշխատանքներ				0,000	0,000
1	27-251	Բիտումի լցաբաշխում գոյություն ունեցող ա/բ ծածկույթիվրա 1,2կգ/1,0բմ	տն	0,288	282,332	276,685	79,685
2	27-169	Ծածկույթի կառուցում միաշերտ մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /3սմ/	$մ^2$	240,00	2,737	2,683	643,816
3	6-1 1-1	Բետոնե հենապատի և աստիճանների կողային պատերի գլխամասի նորոգում B-15 բետոնով	$մ^3$	1,50	41,446	40,617	60,926
4	15-201 51-1	Բետոնե հենապատի և աստիճանների կողային պատերի սվաղում ց/ավազային շաղախով	$մ^2$	84,00	1,512	1,481	124,439
5	15-528	Բետոնե հենապատի և աստիճանների կողային պատերի ներկում ճակատային ներկով	$մ^2$	84,00	0,698	0,684	57,422
6	23-166	Աստիճանների կողային պատերի բազալտե սալիկներով գլխաքարի քանդում	$մ^2$	12,00	0,457	0,448	5,373
7	5-134	Աստիճանների կողային պատերի գլխաքարի կառուցում 3սմ հաստ. բազալտե սալիկներով	$մ^2$	12,00	11,259	11,034	132,402
8	6-1 1-1	Գոյություն ունեցող ուղիների նորոգում B-15 բետոնով	$մ^3$	6,90	41,446	40,617	280,260
9	11-55 11-56	Գոյություն ունեցող բետոնե ուղիների ցեմ. ավազային հարթ շերտի կառուցում 3սմ հաստ	$մ^2$	682,00	1,257	1,232	839,969
10	11-77 11-11	Գոյություն ունեցող բետոնե ուղիների ցեմ. ավազային հարթ շերտի	$մ^2$	682,00	0,204	0,200	136,456
11	15-77	Ուղիների գոյություն ունեցող աստիճանների երեսապատում 3սմ հաստ. բազալտե սալիկներով	$մ^2$	108,00	15,803	15,487	1672,551
12	23-166	Գլխավոր մուտքի աստիճանների բազալտե սալերով երեսապատվածքի քանդում	$մ^2$	7,00	0,457	0,448	3,134
13	15-77	Գլխավոր մուտքի աստիճանների երեսապատում 3սմ հաստ. բազալտե սալիկներով	$մ^2$	7,00	15,803	15,487	108,406
14	9-122	Մետաղական ցանցով ցանկապատի վերանորոգում	տն	0,3150	81,301	79,675	25,098
15		Անկյունակ L50x5	մ	75,40	1,955	1,916	144,440
16		Ցանց 50x50, d=4մմ	$մ^2$	24,00	1,848	1,811	43,468
17	13-263	Մետաղական ցանցով ցանկապատի ժանգի մաքրում խոզանակով	$մ^2$	75,00	1,254	1,229	92,193
18	15-614	Մետաղական ցանցով ցանկապատի լուսաներկում 2 անգամ	$մ^2$	240,00	1,237	1,212	290,855
		Մետաղական ծածկարանի տանիքի վերանորոգում /Ծ-1/				0,000	0,000
1	9-122	Ծածկարանի լրացուցիչ պողպատե էլեմենտների տեղադրում	տն	0,120	81,301	79,675	9,561
2		Պողպատե խողովակ 40x40x3	մ	32,00	1,766	1,730	55,371
3	23-159	Տանիքի ասբոհերցաքարե ծածկույթի քանդում միասին	$մ^2$	60,00	0,211	0,207	12,417

4	12-404	Տանիքածածկույթի կառուցում կավարամածի հետ միասին գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով КП-25-0.5մմ	մ^2	60,00	7,299	7,153	429,153
5		փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ^3	0,60	168,151	164,788	98,873
6	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ^2	12,00	1,237	1,212	14,543
7	14-357	Փայտե էլեմենտներ յուղաներկում 2 անգամ	մ^2	8,60	1,533	1,502	12,917
		Մետաղական ծածկարանի տանիքի վերանորոգում /Ծ-2/				0,000	0,000
1	9-122	Ծածկարանի լրացուցիչ պողպատե էլեմենտների տեղադրում	տն	0,7494	81,301	79,675	59,708
2		Պողպատե խողովակ 100x100x4,5	մ	86,50	6,966	6,827	590,507
3		Պողպատե խողովակ 40x40x3	մ	86,50	1,766	1,730	149,675
4	12-404	Տանիքածածկույթի կառուցում կավարամածի հետ միասին գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով КП-25-0.5մմ	մ^2	70,50	7,299	7,153	504,255
5		փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ^3	0,50	168,151	164,788	82,394
6	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ^2	15,60	1,237	1,212	18,906
7	14-357	Փայտե էլեմենտներ յուղաներկում 2 անգամ	մ^2	41,00	1,533	1,502	61,582
8	6-32	Ճակտոնների երեսապատում գունավոր ալյումինաբոնով	մ^2	8,40	11,431	11,203	94,104
		Մետաղական ֆերմաների կառուցում				0,000	0,000
1	9-69 10-1	Մետաղական ֆերմաների կառուցում	տն	0,59039	57,052	55,911	33,009
2		Մետաղական անկյունակ 45x4	մ	107,36	1,481	1,452	155,856
3		Մետաղական անկյունակ 32x4	մ	51,04	0,924	0,906	46,221
4		Մետաղական անկյունակ 75x7	մ	24,40	4,236	4,152	101,302
5	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ^2	5,30	1,237	1,212	6,423
6	8-215-Բ	Գունավոր ջրհոս խողովակների տեղադրում լաթապատ գ/թիթեղից Φ100	մ	8,30	2,928	2,869	23,813
		Նոր ուղիների կառուցում				0,000	0,000
1	11-2	Բնահեղի տոփանում	մ^2	28,00	0,351	0,344	9,639
2	16-51	Խճի նախաշերտի կառուցում 100մմ հաս. /20-40մմ/	մ^3	2,80	8,817	8,641	24,195
3	11-11	Բետոնե նախաշերտի կառուցում Բ 7.5 100մմ հաստ.	մ^3	2,80	35,950	35,231	98,647
4	27-74	Բետոնե եզրաքարի տեղադրում	մ	40,00	3,319	3,253	130,107
5	11-77 11-11	Ուղիների երկաթայնացում	մ^2	28,00	0,204	0,200	5,602
		Թեքահարթակի կառուցում				0,000	0,000
1	11-2	Բնահեղի տոփանում	մ^2	43,20	0,351	0,344	14,871
2	16-51	Խճի նախաշերտի կառուցում 100մմ հաս. /20-40մմ/	մ^3	4,32	8,817	8,641	37,330
3	16-50	Լիցք ավազակոպիճով	մ^3	60,20	4,018	3,938	237,041
4	11-11	Բետոնե նախաշերտի կառուցում Բ 7.5 100մմ հաստ.	մ^3	4,32	35,950	35,231	152,199
5	11-55 11-56	Ցեմ. ավազային հարթ շերտի կառուցում 3սմ հաստ	մ^2	43,20	1,257	1,232	53,206
6	6-21 1-21	Հենապատի հիմքերի կառուցում Բ-7.5 խամբարաբետոնով	մ^3	4,54	35,336	34,629	157,216

	6-91	Հենապատի կառուցում խամբարբետոնից B 7.5	մ³	6,62	36,261	35,536	235,249
8	15-23 6-8	Հենապատի երեսապատում բազալտե սալիկներով 3սմ հաստ.	մ²	22,05	20,725	20,310	447,839
9	5-134	Հենապատի գլխաքարի կառուցում 3սմ հաստ. բազալտե սալիկներով	մ²	5,08	11,259	11,034	56,050
10	11-77 11-11	Թեքահարթակի երկաթայնացում	մ²	43,20	0,204	0,202	8,726
			Ընդամենո				56772,442
			Շահույթ 11%				6244,969
			Ընդամենո				63017,410
			Ա.Ա.Հ. 20%				12603,482
			Ամբողջը				75620,892

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Դիլիջան, Մոլդովական 46 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 90040208013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար՝ Ա. Սամսոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
,,ԳԵՎՏԱՆԻՔ,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Հյուսիսային 14
ՀՎՀՀ 06944677
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
ՀՀ 220053334045000

Տնօրեն Ս.Խանզատյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելվածթիվ 2
«25»06 2020 թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1			
2			
3			
4			
5			
...			
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 90040208013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա.Սանթրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,ԳԵՎՏԱՆԻՔ,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Հյուսիսային 14
ՀՎՀՀ 06944677
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
ՀՀ 220053334045000

Տնօրեն Մ.Խանզատյան

/ստորագրություն/
Կ.Տ

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«25»06 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211228	Դիլիջան համայնքի թիվ 3 մանկապարտեզի շենքի վերանորոգում													

** Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 90040208013
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա.Նանթոյան

/ստորագրություն/
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,ԳԵՎՏԱՆԻՔ,, ՍՊԸ
Ք. Վանաձոր, Հյուսիսային 14
ՀՎՀՀ 06944677
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
ՀՀ 220053334045000

Տնօրեն Կ.Խանգլատյան

/ստորագրություն/
L.S.

Հավելվածթիվ 4
«» 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելուվայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարվածաշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված
«» 20 թ. կնքվ
ծածկագրով պայմանա

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և_____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակ
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն